Արձանագրության 4

Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

20.03.2019թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Սարգսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գյուրջյան /գնահատող/, Կ. Ղազարյան /գնահատող/
Գ. Օրբելյան /բացող/, Դ. Ասլանյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Գ. Սարգսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Գ. Սարգսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ԱՁ Մարինե Կոյումջյան Միհրանի	Բավարար
«ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

3. «ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Գ. Սարգսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ **«ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/1»** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել,

- 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Մարինե Կոյումջյան Միհրանի Ա/Ձ-ին,
- 3-րդ չափաբաժնի մասով «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ին,

և վերջիններիս ներկայացնել **Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման** պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Գ. Սարգսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:40-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5,դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Գ. Սարգսյան

Անդամներ՝ ---------- Ա. Գյուրջյան

---------- Կ. Ղազարյան

---------- Գ. Օրբելյան

---------- Դ. Ասլանյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան